ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 20.02.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/96

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 26.12.2017թ. թիվ 03/26-3/24409-17 գրությամբ «Էլիպս գրուպ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) 25.12.2017թ. թիվ ԴՎԱ/4881 գրության հիման վրա, 26.12.2017թ. թիվ 03/26-3/24409-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Էլիպս գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 27.12.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/24463-17 գրությամբ կարծիք ստանալու նպատակով դիմել է «Էլիպս գրուպ» ՍՊԸ-ին:

Ի պատասխան վերոհիշյալ գրության՝ Ընկերությունը 22.01.2018թ. գրությամբ հայտնել է, որ Ընկերությանը ցուցակում ներառելու համար հիմքեր առկա չեն հետևյալ պատճառաբանությամբ.

«Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել և մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՇՀԱՊՁԲ-10/7-2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ ընթացակարգ):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ Ընկերությունը երեք չափաբաժինների մասով ճանաչվել է հաղթող մասնակից և ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի միջև 2017թ. օգոստոսի 9-ին կնքվել է ապրանքի մատակարարման պետական գնման թիվ «ՇՀԱՊՁԲ-10/7-2» ծածկագրով պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է նույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված թիվ 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին մատակարարել պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ /այսուհետ նաև՝ Ապրանք/, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար (հավելված թիվ 3):

Պայմանագրի թիվ 1 հավելվածի, տեխնիկական բնութագրի համաձայն՝ Ընկերությունը պետք է մատակարարեր լուսամփոփ լումինիսցենտային լամպերով 2x18Վտ, օդատաքացուցիչներ /էլեկտրական օդատաքացուցիչ՝ հատակի, ջերմային ավտոմատ անջատիչով, միաֆազ միացման 2,2 Կվտ, մեծ/, և ջրատաքացուցիչ կաթսաներ /էլեկտրաջրատաքացուցիչ ավտոմատ ջերմակարգավորիչով, միաֆազ միացման 2-2,5 Կվտ 100լ ջրի տարողությամբ/:

Պայմանագրի թիվ 2 հավելվածի, գնման ժամանակացույցի համաձայն՝ թիվ 1 հավելվածով նախատեսված ապրանքները պետք է մատակարարվեն 2017թ. երրորդ եռամսյակում, բայց ոչ ուշ քան 20.09.2017թ.-ը:

Պայմանագրի թիվ 4 հավելվածի, հանձման-ընդունման արձանագրության համաձայն՝ պատվիրատուի կողմից ընդունվել է թիվ 1 հավելվածով նախատեսված լուսամփոփ լումինիսցենտային լամպերով 2x18Վտ և ջրատաքացուցիչ կաթսաներ /էլեկտրաջրատաքացուցիչ ավտոմատ ջերմակարգավորիչով, միաֆազ միացման 2-2,5 Կվտ 100լ ջրի տարողությամբ/ ապրանքները:

ՀՀ պաշտպանության նախարարության 19.12.2017թ. թիվ ԴՎԱ/4745 և 25.12.2017թ. թիվ ԴՎԱ/4881 գրությունների համաձայն՝ պատվիրատուի և ընկերության միջև կնքված պայմանագրի համաձայն, ընկերությունը պարտավոր է պատվիրատուին մատակարարել 400 հատ օդատաքացուցիչներ /էլեկտրական օդատաքացուցիչ՝ հատակի, ջերմային ավտոմատ անջատիչով, միաֆազ միացման 2,2 Կվտ, մեծ/ ապրանքատեսակ՝ 2 800 800 ՀՀ դրամ ընդհանուր գումարով, սակայն 13.12.2017թ. դրությամբ նշված քանակի մատակարարում չի իրականացվել:

Պատվիրատուն հիմք ընդունելով պայմանագրի 3.1.7 և 3.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ օդատաքացուցիչներ /էլեկտրական օդատաքացուցիչ՝ հատակի, ջերմային ավտոմատ անջատիչով, միաֆազ միացման 2,2 Կվտ, մեծ/ ապրանքատեսակի մասով միակողմանի մասնակի լուծել է պայմանագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (2017 թվականի ապրիլի 25-ի ՀՕ-21-Ն օրենք) 57-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի պահանջները չեն տարածվում մինչև նույն օրենքն ուժի մեջ մտնելն սկսած և չդադարած, ինչպես նաև կնքված և գործող գնման գործարքների վրա, իսկ դրանց հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների կնքման պահին գործող իրավական ակտերով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը

հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը»:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը հայտնել է, որ «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն, քանի որ Ընկերությունը խախտել է պայմանագրով նախատեսված մեկ պարտավորություն, այն է՝ չի մատակարարել պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված օդատաքացուցիչներ /էլեկտրական օդատաքացուցիչ՝ հատակի, ջերմային ավտոմատ անջատիչով, միաֆազ միացման 2,2 Կվտ, մեծ/ ապրանքատեսակը, պայմանագրի թիվ 2 հավելվածով նախատեսված ժամկետում, ինչի հիման վրա << պաշտպանության նախարարությունը 19.12.2017թ. թիվ ԴՎԱ/4745 գրությամբ պայմանագիրը միակողմանի մասնակի լուծարել է, իսկ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը:

Ընկերությունը վերը նշված գրությամբ Խորհրդին խնդրել է «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել և Ընկերությանը չներառել ցուցակում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված մեկ պարտավորություն:

«Էլիպս գրուպ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 28.12.2017թ. ժամը 12:15-ի և 23.01.2018թ. ժամը 11:20-ի նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 25.12.2017թ. թիվ ԴՎԱ/4881 գրությամբ հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլիպս գրուպ» ՍՊԸ-ի միջև 09.08.2017թ. կնքված ՇՀԱՊՁԲ-10/7-2 ծածկագրով գնման պայմանագրի 3.1.7 կետը, 3.1.7.1 կետերի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2017թ. դեկտեմբերի 18-ից միակողմանի՝ 400 հատ «Էլեկտրական օդատաքացուցիչ՝ հատակի, ջերմային ավտոմատ անջատիչով, միաֆազ միացման 2.2 ԿՎՏ (մեծ)» ապրանքատեսակի մասով լուծել է վերը նշված պայմանագիրը:

ՀՀ պաշտպանության նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 28.12.2017թ. ժամը 12:15-ի և 23.01.2018թ. ժամը 11:20-ի նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. **<u>ՍՑ-ԱՄ-2017/96 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>**

ՍՑ-ԱՄ-2017/96 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի միջև 09.08.2017թ. կնքվել է «ՇՀԱՊՁԲ-10/7-2» ծածկագրով ապրանքների մատակարարման պետական գնման պայմանագիր:

2. Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ Վաճառողը (տվյալ դեպքում՝ «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ն) պարտավորվում է նույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին մատակարարել պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական

բնութագրով նախատեսված ապրանքներ /այսուհետ նաև՝ Ապրանք/, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար (հավելված N 3):

3. Պայմանագրի թիվ 1 հավելվածի, տեխնիկական բնութագրի համաձայն՝ Ընկերությունը պետք է մատակարարեր լուսամփոփ լումինիսցենտային լամպերով 2x18Վտ, օդատաքացուցիչներ /էլեկտրական օդատաքացուցիչ՝ հատակի, ջերմային ավտոմատ անջատիչով, միաֆազ միացման 2.2 Կվտ, մեծ/ և ջրատաքացուցիչ կաթսաներ /էլեկտրաջրատաքացուցիչ ավտոմատ ջերմակարգավորիչով, միաֆազ միացման 2-2.5 Կվտ 100լ ջրի տարողությամբ/:

4. Պայմանագրի թիվ 2 հավելվածի, գնման ժամանակացույցի համաձայն՝ թիվ 1 հավելվածով նախատեսված ապրանքները պետք է մատակարարվեն 2017թ. երրորդ եռամսյակում, բայց ոչ ուշ քան 20.09.2017թ.-ը:

5. Պայմանագրի թիվ 4 հավելվածի, հանձման-ընդունման արձանագրության համաձայն՝ պատվիրատուի կողմից ընդունվել է թիվ 1 հավելվածով նախատեսված լուսամփոփ լումինիսցենտային լամպերով 2x18Վտ և ջրատաքացուցիչ կաթսաներ /էլեկտրաջրատաքացուցիչ ավտոմատ ջերմակարգավորիչով, միաֆազ միացման 2-2.5 Կվտ 100լ ջրի տարողությամբ/ ապրանքները:

6. << պաշտպանության նախարարության 19.12.2017թ. թիվ ԴՎԱ/4745 և 25.12.2017թ. թիվ ԴՎԱ/4881 գրությունների համաձայն՝ պատվիրատուի և ընկերության միջև կնքված պայմանագրի համաձայն, ընկերությունը պարտավոր էր պատվիրատուին մատակարարել 400 հատ օդատաքացուցիչներ /էլեկտրական օդատաքացուցիչ՝ հատակի, ջերմային ավտոմատ անջատիչով, միաֆազ միացման 2.2 Կվտ, մեծ/ ապրանքատեսակ՝ 2 800 800 << դրամ ընդհանուր գումարով, սակայն 13.12.2017թ. դրությամբ նշված քանակի մատակարարում չի իրականացվել:

7. Պատվիրատուն, հիմք ընդունելով պայմանագրի 3.1.7 և 3.1.7.1 կետի «բ» ենթակետը, 18.12.2017թ.-ին միակողմանի՝ 400 հատ օդատաքացուցիչներ օդատաքացուցիչներ /էլեկտրական օդատաքացուցիչ՝ հատակի, ջերմային ավտոմատ անջատիչով, միաֆազ միացման 2,2 Կվտ, մեծ/ ապրանքատեսակի մասով, լուծել է պայմանագիրը:

5.Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 26.12.2017թ. թիվ 03/26-3/24409-17 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 25.12.2017թ. թիվ ԴՎԱ/4881 գրությունը՝ կից փաստաթղթերով և «Էլիպս գրուպ» ՍՊԸ-ի 22.01.2018թ. գրությունը, հայտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ ***«Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ*** (կետանցով, ապրանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) ***կատարելը»:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (2017 թվականի ապրիլի 25-ի ՀՕ-21-Ն օրենք) 57-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի պահանջները չեն տարածվում մինչև նույն օրենքն ուժի մեջ մտնելն սկսած և չդադարած, ինչպես նաև կնքված և գործող գնման գործարքների վրա, իսկ դրանց հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների կնքման պահին գործող իրավական ակտերով:

2010 թվականի դեկտեմբերի 22-ի «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի միջև 09.08.2017թ. կնքվել է «ՇՀԱՊՁԲ-10/7-2» ծածկագրով ապրանքների մատակարարման պետական գնման պայմանագիր:

Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ Վաճառողը (տվյալ դեպքում՝ «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ն) պարտավորվում է նույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին մատակարարել պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ /այսուհետ նաև՝ Ապրանք/, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար (հավելված N 3):

Պայմանագրի թիվ 1 հավելվածի, տեխնիկական բնութագրի համաձայն՝ Ընկերությունը պետք է մատակարարեր լուսամփոփ լումինիսցենտային լամպերով 2x18Վտ, օդատաքացուցիչներ /էլեկտրական օդատաքացուցիչ՝ հատակի, ջերմային ավտոմատ անջատիչով, միաֆազ միացման 2.2 Կվտ, մեծ/ և ջրատաքացուցիչ կաթսաներ /էլեկտրաջրատաքացուցիչ ավտոմատ ջերմակարգավորիչով, միաֆազ միացման 2-2.5 Կվտ 100լ ջրի տարողությամբ/:

Պայմանագրի թիվ 2 հավելվածի, գնման ժամանակացույցի համաձայն՝ թիվ 1 հավելվածով նախատեսված ապրանքները պետք է մատակարարվեն 2017թ. երրորդ եռամսյակում, բայց ոչ ուշ քան 20.09.2017թ.-ը:

Պայմանագրի թիվ 4 հավելվածի, հանձման-ընդունման արձանագրության համաձայն՝ պատվիրատուի կողմից ընդունվել է թիվ 1 հավելվածով նախատեսված լուսամփոփ լումինիսցենտային լամպերով 2x18Վտ և ջրատաքացուցիչ կաթսաներ /էլեկտրաջրատաքացուցիչ ավտոմատ ջերմակարգավորիչով, միաֆազ միացման 2-2.5 Կվտ 100լ ջրի տարողությամբ/ ապրանքները:

ՀՀ պաշտպանության նախարարության 19.12.2017թ. թիվ ԴՎԱ/4745 և 25.12.2017թ. թիվ ԴՎԱ/4881 գրությունների համաձայն՝ պատվիրատուի և ընկերության միջև կնքված պայմանագրի համաձայն, ընկերությունը պարտավոր էր պատվիրատուին մատակարարել 400 հատ օդատաքացուցիչներ /էլեկտրական օդատաքացուցիչ՝ հատակի, ջերմային ավտոմատ անջատիչով, միաֆազ միացման 2.2 Կվտ, մեծ/ ապրանքատեսակ՝ 2 800 800 ՀՀ դրամ ընդհանուր գումարով, սակայն 13.12.2017թ. դրությամբ նշված քանակի

մատակարարում չի իրականացվել, ուստի Պատվիրատուն, հիմք ընդունելով պայմանագրի 3.1.7 և 3.1.7.1 կետի «բ» ենթակետը, 18.12.2017թ.-ին միակողմանի՝ 400 հատ օդատաքացուցիչներ օդատաքացուցիչներ /էլեկտրական օդատաքացուցիչ՝ հատակի, ջերմային ավտոմատ անջատիչով, միաֆազ միացման 2,2 Կվտ, մեծ/ ապրանքատեսակի մասով, լուծել է պայմանագիրը:

«Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ն 22.01.2018թ. Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է, որ «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն, քանի որ Ընկերությունը խախտել է պայմանագրով նախատեսված մեկ պարտավորություն, այն է՝ չի մատակարարել պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված օդատաքացուցիչներ /էլեկտրական օդատաքացուցիչ՝ հատակի, ջերմային ավտոմատ անջատիչով, միաֆազ միացման 2,2 Կվտ, մեծ/ ապրանքատեսակը, պայմանագրի թիվ 2 հավելվածով նախատեսված ժամկետում, ինչի հիման վրա ՀՀ պաշտպանության նախարարությունը 19.12.2017թ. թիվ ԴՎԱ/4745 գրությամբ պայմանագիրը միակողմանի մասնակի լուծարել է:

Այսպիսով Խորհուրդն արձանագրում է, որ Պայմանագրի 3-րդ կետի 3.1.7 ենթակետը սահմանում է, որ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը:

Նույն կետի 3.1.7.1 ենթակետի համաձայն՝ ***Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝***

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որի չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, Խորհուրդը գտնում է, որ «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ն թույլ է տվել ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի միջև կնքված «ՇՀԱՊՁԲ-10/7-2» ծածկագրով ապրանքների մատակարարման պետական գնման պայմանագրով նախատեսված պարտավորության խախտում, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի մասնակի լուծմանը, քանի որ Ընկերությունը չի մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված 400 հատ օդատաքացուցիչներ /էլեկտրական օդատաքացուցիչ՝ հատակի, ջերմային ավտոմատ

անջատիչով, միաֆազ միացման 2,2 Կվտ, մեծ/ ապրանքատեսակը, Պայմանագրի թիվ 2 հավելվածով նախատեսված ժամկետում:

Միևնույն ժամանակ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը***:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից խախտվել է Պայմանագրով նախատեսված մեկ պարտավորություն, ուստի Խորհուրդը գտնում է, որ թույլ տրված խախտումը դեռևս բավարար հիմք չէ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով սահմանված կարգով Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 26.12.2017թ. թիվ 03/26-3/24409-17 գրությամբ «Էլիպս գրուպ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02627826) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ